

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՔԱԶԱՐԱՆ 2020

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ծրագրի առաջնայնությունները սահմանել ենք՝

- առաջնորդվելով* Քաջարան համայնքի զարգացման 2018-2022 թթ ծրագրի դրույթներով,
հիմք ընդունելով Հայաստանի էներգաարդյունավետ համայնքների դաշինքի շրջանակներում
Քաջարան համայնքի ստանձնած պարտավորությունները,
համոզված լինելով, որ համայնքի կայուն զարգացումը էապես կախված է էկոլոգիական
խնդիրների լուծումից,
գիտակցելով էկոլոգիական կրթության և տեղեկատվության կարևորությունը էկոլո-
գիական մտածողության ձևավորման և համայնքի առջև ծառայած
խնդիրների լուծմանը հասարակության ակտիվ մասնակցությունը
ապահովելու գործում,
կարևորելով բնապահպանական ծրագրերի շարունակականությունը, ամբողջականությունն
ու փոխկապակցվածությունը :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք :
2. ՀՀ կառավարության «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները ՀՀ Բնապահպանության նախարարության ու ՀՀ Առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» 29.09.2002թ թիվ 1544-Ն որոշում:
3. ՀՀ Կառավարության «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» 27.02.2014թ. թիվ 197-Ն որոշում:
4. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք :
5. Քաջարան համայնքի զարգացման 2018-2022 թթ հնգամյա ծրագիր:

ԾՐԱԳՐԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

- ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՌՈՂՋ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ
- ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ԷՆԵՐԳԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
- ԲԱՐԵԼԱՎԵԼ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԸ
- ՆՊԱՍՏԵԼ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆԱԽԱՏԵՍՎՈՂ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԻԳԻԵՆԻԿ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Խնդիր 1 Նվազեցնել բնակավայրերի փողոցների փոշով աղտոտվածությունը

Քաջարան համայնքում է գտնվում հանրապետության խոշորագույն պղնձամոլիբդենային հանքավայրը: Այն շահագործվում է Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից:

Լեռնահանքային արդյունաբերությունը առաջատար դիրք է գրավում շրջակա միջավայրի վրա ունեցած բացասական ազդեցության ինտենսիվությամբ, խախտումների աստիճանով, որակական փոփոխությունների չափով ու խորությամբ: Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը դրսևորվում է հատկապես վնասակար նյութեր պարունակող հանքային փոշով ինտենսիվ աղտոտմամբ:

Մթնոլորտային օդի աղտոտվածությունը բերում է շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների աղտոտման, իսկ աղտոտվածության բացասական ազդեցության հիմնական թիրախը, վերջին հաշվով, համայնքի բնակչությունն է: Այս առումով մթնոլորտային օդի մաքրության պահպանությունը առանձնակի կարևորություն է ստանում:

Մթնոլորտային օդը փոշով աղտոտող հիմնական օբյեկտները ՋՊՄԿ արտադրամասերն են՝ բաց հանք, հանքաքարի ջարդման և տեղափոխման, խտանյութի չորացման արտադրամասեր, դատարկ ապարների թափուկավայրեր և այլն: Փոշու առաջացման աղբյուր են հանդիսանում նաև շինարարական (առավելապես արդյունաբերական) աշխատանքներն ու Հայաստան - Իրան միջպետական մայրուղին, որը համայնքի մի շարք բնակավայրերի միջով է անցնում:

Փոշու ծանրաբեռնվածությունը քաղաքի վրա վերջին տարիներին մեծացել է նաև ՋՊՄԿ արտադրական հզորությունների ընդլայնման, բնակավայրերի կառուցապատված հատվածների և ՋՊՄԿ արտադրամասերի միջև սանիտարական գոտու բացակայության, քաղաքին բաց հանքի աշխատանքային ճակատների մոտիկության պատճառներով: Փոշու ծանրաբեռնվածության անընդհատ աճը տեսանելի է անգամ անզեն աչքով:

Փոշին նաև քաղաքում լայնորեն տարածված շնչառական ուղիների և ալերգիկ հիվանդությունների հիմնական պատճառներից մեկն է:

Փոշու դեմ պայքարը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ փոշին ծանր մետաղների տարրեր է պարունակում. առկա են նաև վտանգավորության 1-ին և 2-րդ դասի տարրեր:

Գործողություն Բազմաֆունկցիոնալ ջրցան մեքենայի ձեռք բերում

Հիմնավորում

Քաղաքում փոշեճնշման աշխատանքներ կատարելու համար քաղաքապետարանը «Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպա-

նության» ծրագրի շրջանակներում 2008թ. ձեռք է բերել ջրցան մեքենա: Մեքենայի շահագործումը զգալիորեն բարձրացրել է փոշու դեմ պայքարի արդյունավետությունը:

Շահագործման 12 տարիների ընթացքում մեքենան ֆիզիկապես մաշվել է և չի կարող ապահովել առկա աշխատանքների ամբողջ ծավալի իրականացումը: Էական գործոն է նաև համայնքի խոշորոցումը, որի արդյունքում ավելացել են փոշով աղտոտման գոտում գտնվող բնակավայրերի թիվը, արդյունքում՝ ավելացել է փոշեճնշման աշխատանքների ծավալը:

Արդյունք

- Համայնքի կոմունալ ծառայությունների կարողությունների մեծացում
- Բնակավայրերում լվացվող փողոցների ընդլայնում
- Կբարելավվի բնակավայրերի սանիտարահիգիենիկ վիճակը
- Կբարձրանա փոշեճնշման աշխատանքների արդյունավետությունը
- Մեքենան կօգտագործվի նաև կանաչ տնկարկների ոռոգման համար՝ այն տարածքներում, որտեղ ոռոգման համակարգեր չկան:

Համապատասխանությունը Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.

Հանապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի «*շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքարը, որը ներառում է մթնոլորտային օդի մաքրության պահպանության, ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա) պահպանության, աղմուկի և վիբրացիայի դեմ պայքարի և ճառագայթահարման դեմ պաշտպանության հետ կապված աշխատանքները և գործողությունները (...)*» պարբերությամբ:

Խնդիր 2 Թափոնների կառավարման բարելավում

Համայնքի սանիտարահիգիենիկ իրավիճակի վրա բացասական ազդեցություն է թողնում բնակավայրերի փողոցներում, պուրակներում, խաղահրապարակներում և որոշ հանգստի գոտիներում աղբամանների բացակայությունը կամ սակավությունը: Այս հանգամանքը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում նաև քաղաքի սանիտարական մաքրումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

Գործողություն. Համայնքի բնակավայրերի պուրակների, հանգստյան գոտիների, փողոցների համար աղբամանների ձեռք բերում:

Հիմնավորում Նախորդ երեք տարիների ընթացքում համայնքապետարանի կողմից ձեռք է բերվել և տեղադրվել մոտ 120 հատ աղբաման: Այս քանակը ակնհայտորեն բավարար չէ ոչ միայն համայնքի բոլոր բնակավայրերի, այլև Քաջարան քաղաքի կարիքները բավարարելու համար:

Նախկինում տեղադրված աղբամանների մեծ մասը պլաստմասսե աղբամաններ էին, որոնք կարճ ժամանակում փչացել են և այժմ շահագործման ենթակա չեն:

Աղբամանների ակնհայտ սակավությունը էականորեն նվազեցնում է սանմաքրման աշխատանքների արդյունավետությունը՝ առաջ բերելով բնակիչների արդարացի դժգոհություն:

Արդյունք

- Կբարձրանա սանմաքրման աշխատանքների արդյունավետությունը
- Գյուղական բնակավայրերի կենտրոնական, բանուկ փողոցներն ու հրապարակները պատշաճ կահավորում կստանան
- Քաջարան քաղաքի փողոցներից երկուսը կհամալրվեն աղբամաններով:

Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.

Համապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի **«-թափոնների օգտահանմանը, դրանց անվտանգ հեռացմանը, թափոնների հեռացման մասնագիտական պոլիգոնների ստեղծմանը...»** պարբերությանը:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 2. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Խնդիր 1 Համայնքային ենթակառուցվածքների էներգաարդյունավետ արդիականացում

2016թ. ՄԱԶԾ կողմից իրականացվող և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից համակարգվող «Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՀ/00074869 ծրագրի շրջանակներում իրականացվել է Քաջարանի քաղաքային լուսավորության (Լեռնագործներ փողոց) համակարգի էներգաարդյունավետ արդիականացման ցուցադրական նախագիծ՝ ՄԱԶԾ և Քաջարանի քաղաքապետարանի կողմից ստորագրված հուշագրի հիման վրա:

2017թ. Քաջարանի շրջակա միջավայրի պահպանության և ՄԱԶԾ կողմից իրականացվող և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից համակարգվող «Քաղաքային կանաչ լուսավորություն» Ծրագրերի շրջանակներում իրականացվել է ևս երեք փողոցների լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացման նախագիծ:

2018-2019թթ համայնքապետարանը շարունակել է բնակավայրերի փողոցային լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքները, որի արդյունքում Քաջարան քաղաքի փողոցների լուսատուները ամբողջությամբ են փոխվել, իսկ գյուղական բնակավայրերինը՝ մեծ մասամբ:

Իրականացված նախագծերն առանձնացան իրենց արդյունավետությամբ՝ տարեկան ավելի քան 4մլն. դրամ բյուջետային միջոցների խնայողություն, փողոցների լուսավորվածության բարձր որակ, համակարգի սպասարկման ծախսերի կտրուկ նվազում:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված է 2021թ. ավարտել Քաջարան քաղաքի և համայնքում ընդգրկված գյուղական բնակավայրերի փողոցային լուսավորության ամբողջ համակարգի էներգաարդյունավետ արդիականացման աշխատանքները:

Գործողություն Լուսադիողային լուսատուների ձեռք բերում համայնքի բնակավայրերի փողոցների լուսավորման համակարգերի համար

Հիմնավորում

Համայնքի գյուղական բնակավայրերի արտաքին լուսավորության համակարգերը ամբողջությամբ չեն արդիականացվել: 2018-20թթ մասամբ փոխարինվել են Քաջարանց, Լեռնաձոր, Ձագիկավան, Գեղի, Բաբիկավան, Գեպիշեն և Նոր Աստղաբերդ բնակավայրերի լուսավորության Անհրաժեշտ է ամբողջացնել այս բնակավայրերի լուսավորության համակարգերի արդիականացումը, ինչպես նաև իրականացնել մյուս բնակավայրերի՝ Կաթնառապ, Փուխրուպ, Անդրկավան գյուղերի համակարգերի արդիականացումը:

Արդյունք

- բյուջետային միջոցների խնայողություն
- փողոցների լուսավորվածության բարձր որակ
- ջերմոցային գազերի արտենետման նվազում

Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.

Հանապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի *«շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքարը, որը ներառում է մթնոլորտային օդի մաքրության պահպանության, ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա) պահպանության, աղմուկի և վիբրացիայի դեմ պայքարի և ճառագայթահարման դեմ պաշտպանության հետ կապված աշխատանքները և գործողությունները (...)*» պարբերությամբ:

Հիմնախնդիր 3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ Խնդիր 1. Էկոլոգիական կրթության զարգացում և տեղեկատվություն

Համայնքում էկոլոգիական կրթության զարգացումը համայնքապետարանի կողմից իրականացվող էկոլոգիական քաղաքականության հիմնական բաղադրիչն է:

«Քաջարանի բնության և բնակչության առողջության պահպանություն» ծրագրի շրջանակներում էկոլոգիական գիտելիքների տարածման և էկոկրթության զարգացման նպատակներով համայնքի հանրակրթական դպրոցների ուսումնական պլաններում ընդգրկվել է «Քաջարան. Բնությունը և էկոլոգիան» դպրոցական առարկան: Կազմվել է համապատասխան ուսումնական ձեռնարկ, ուսումնական դիտակտիկ նյութեր: Առարկայի դասավանդումը, դասընթացն ավելի գործնական, հաճելի ու գրավիչ դարձնելու համար Ծրագրի շրջանակներում դպրոցներում մասնագիտացված էկոլոգիական դասարան-լաբորատորիաներ են ստեղծվել, համալրվել համապատասխան ուսումնական նյութերով ու սարքավորումներով: Դասարան-լաբորատորիաների ուսումնական արդիական տեխնիկական միջոցներով հագեցված լինելը համակողմանի ու արդյունավետ է դարձնում աշակերտների էկոլոգիական կրթության ու դաստիարակության կազմակերպումը:

Գործողություն 1. Քաջարանի դպրոցներում քաղաքապետարանի կողմից ստեղծված էկոլոգիայի լաբորատորիաների գործունեության ապահովում

- լաբորատոր նյութերի, պարագաների համալրում,
- ուսումնական դիտակտիկ նյութերի ձեռք բերում,
- կրթական ծառայությունների ձեռք բերում:

Հիմնավորում. «Քաջարան.բնությունը և էկոլոգիան» ուսումնական առարկայի դասավանդման ու դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների ընթացիկ գործունեության ապահովումն իրականացնում է համայնքապետարանը: Այս բնագավառում քաղաքապետարանի հանձն առած գործունեությունը լիովին համապատասխանում է «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին», «Կրթության մասին», «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքների, ՄԱԿ-ի «ԵՏՀ Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության սկզբունքներին ու դրույթներին:

Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.

Հանապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի « **շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ տեղեկատվության տարածման կամ իրազեկման, էկոլոգիական կրթության գծով աշխատանքները և գործողությունները, բնապահպանությանը վերաբերող վերապատրաստման դասընթացների կազմակերպումը և ինստիտուցիոնալ ամրապնդումը**» և Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի «**համայնքահեն բնապահպանական հասարակական կազմակերպություններին սույն կետում նշված միջոցառումների կատարման համար աջակցության ցուցաբերումը**» պարբերություններին:

Հիմնախնդիր 4 ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱԿՈՒՄ

Խնդիր 1. Համայնքային կրթական հաստատությունների բուժկետերի տեխնիկական պայմանների բարելավում

Նախագծի նպատակը համայնքային մանկապարտեզի բուժկետի տեխնիկական պայմանները ՀՀ Կառավարության 05.12.2002թ. № 1936-Ն «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, գյուղական բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժական կաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխանեցնելն է:

Համայնքի Լեռնաձոր գյուղի մանկապարտեզի բուժկետում առկա միջոցները բավարար չեն քանակապես, հնացած են և չեն համապատասխանում արդիական բժշկական, բարոյական, տեխնիկական, էսթետիկական պահանջներին:

Քաջարանի արվեստի դպրոցը հիմնանորոգվել է 2019թ.: Բուժկետը համալրված չէ անհրաժեշտ բժշկական պարագաներով, գույքով և սարքավորումներով:

Գործողություն Համայնքի Լեռնաձոր գյուղի մանկապարտեզի և Քաջարանի արվեստի դպրոցի բուժկետերի համար անհրաժեշտ գույքի և սարքերի ձեռք բերում

Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.

Համապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի բ) կետի « - **առողջապահության բնագավառում լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված այլ համապատասխան միջոցառումներ...**» պարբերությանը:


Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ծրագրի իրականացումը թույլ կտա ապահովել իրականացված բնապահպանական ծրագրերի անընդհատությունը և շարունակականությունը, կբարձրացնի էկոլոգիական կրթության զարգացման համար ներդրված միջոցների արդյունավետությունը և կբարելավի քաղաքի էկոլոգիական պայմանները:


Էներգախնայողությանն ու էներգաարդյունավետությանը ուղղված միջոցառումներով համայնքը իր ներդրումը կունենա կլիմայի փոփոխության մեղմմանը ուղղված գործողություններում, կնպաստեն բյուջետային միջոցների խնայմանը, ինչպես նաև կնպաստեն համայնքի կայուն զարգացման հիմքերի ծտեղծմանն ու ամրապնդմանը:

Ծրագիրը կնպաստի նաև համայնքային և պետության կողմից տրամադրվող միջոցների, ՀՀ -ում գրանցված միջազգային, հումանիտար, ոչ կառավարական և այլ կազմակերպությունների հնարավորությունների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմանը՝ քաղաքի առջև ծառայած էկոլոգիական խնդիրների լուծման նպատակով:

Շրջ. միջավայրի պահպանության, գյուղատնտ., տնտեսական զարգացման և ծրագրերի բաժնի պետ՝



Գ. Գաբրիելյան



ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

«Բազմաֆունկցիոնալ ջրցան մեքենայի ձեռք բերում» նախագծի

Նախագծի նկարագրությունը

Ենթածրագրով նախատեսվում է ուժեղացնել համայնքի՝ կոմունալ ծառայություններ իրականացնելու կարողությունները՝ սանիտարական մաքրման աշխատանքների արդյունավետության բարձրացման և համայնքի բնակավայրերի ֆիզիկական միջավայրի հիգիենիկ վիճակի բարելավման նպատակով:

Բնակավայրերի ֆիզիկական միջավայրի հիգիենայի հիմնական խնդիրը միջավայրի փոշու-աղտոտվածության բարձր բակարդակն է: Փոշու դեմ պայքարելու, դրա բացասական ազդեցությունը նվազեցնելու ուղիներից մեկը ջրցան մեքենաներով փոշեճնշման միջոցառումների իրականացումն է:

Քաղաքում փոշեճնշման աշխատանքներ կատարելու համար քաղաքապետարանը «Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանության» ծրագրի շրջանակներում 2008թ. ձեռք է բերել ջրցան մեքենա: Մեքենայի շահագործումը զգալիորեն բարձրացրել է փոշու դեմ պայքարի արդյունավետությունը:


Շահագործման 12 տարիների ընթացքում մեքենան ֆիզիկապես մաշվել է և չի կարող ապահովել առկա աշխատանքների ամբողջ ծավալի իրականացումը:

Էական գործոն է նաև համայնքի խոշորոցումը, որի արդյունքում ավելացել են սպասարկման ենթակա և փոշու աղտոտման գոտում գտնվող բնակավայրերի թիվը, արդյունքում՝ ավելացել է փոշեճնշման աշխատանքների ծավալը:

Նախագծով առաջարկվում է ձեռք բերել բազմաֆունկցիոնալ ջրցան մեքենա, ինչը հնարավորություն կտա ավելացնել լվացվող փողոցների թիվը, ընդգրկելով նաև մոտակա գյուղական բնակավայրերի փողոցները:

Նախատեսվում ենք ձեռք բերել միջին տարողության (մինչև 5 մ³ ծավալով ջրի բարով), դիզելային շարժիչով ջրցան մեքենա: Մեքենան պետք է ունենա նաև դիմային հարթաշերտի, խոզանակ, ավազացրիչ հարմարանք:

Շրջակա միջ. պահպանության, գյուղատնտեսության,
տնտ. զարգացման և ծրագրերի բաժնի պետ՝



Գ. Գարրիեյան

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Քաջարան համայնքի Լեռնաձոր, Անդրկավան, Կաթնառատ, Փոխիրուտ բնակավայրերի լուսավորության
համակարգի էներգաարդյունավետ արդիականացման նախագիծ


Նախագծի նկարագրությունը և արդյունքները

Փողոցների ընդհանուր երկարությունը՝ 1500 մ
Ներկա համակարգ՝ 55 բարձր ճնշման նատրիումային լուսատու
Նախատեսվող համակարգ՝ 50 լուսադիոդային լուսատու
Լուսավորության համակարգի աշխատանքի տևողությունը՝ 2000 ժ/տարի

Փողոցի լուսավորության համակարգի ցուցանիշները	Առկա	Նախատեսվող	Օգուտներ
Լամպերի/լուսատուների տեսակը	Բարձր ճնշման նատրիումային (280 Վտ)	Լուսարձակող դիոդներով լուսատուներ (60 Վտ)	Էներգաարդյունավետ իրականացում
Համակարգի ընդհանուր հզորությունը, կՎտ	15,4	3,0	Նվազում՝ 12,4
Տարեկան էներգասպառումը, ՄՎտժ	30,8	6,0	Նվազում՝ 24,8 (80%)
Լուսավորության միջին մակարդակը, լյուքս (նորմը՝15 լյուքս)	11,0	17,0	Համապատասխանություն նորմերին
Ջերմոցային գազերի տարեկան արտանետումները, տ CO ₂	38,5	3,69	Կրճատում՝ 34,8
Էլեկտրաէներգիայի գծով տարեկան ծախսը	1324,4 հազ. դրամ	258,0 հազ. դրամ	1066,4 հազ

- ✓ 2016թ. Քաջարանի քաղաքային լուսավորության (Լեռնագործներ փողոց) համակարգի էներգաարդյունավետ արդիականացման ցուցադրական նախագիծ է իրականացվում ՄԱԶԾ կողմից իրականացվող և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից համակարգվող «Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՀ/00074869 ծրագրի շրջանակներում ՄԱԶԾ և Քաջարանի քաղաքապետարանի կողմից սպորադարձ հուշագրի հիման վրա:
- ✓ 2018-20թթ. իրականացվել են Քաջարան քաղաքի բոլոր փողոցների լուսավորության համակարգերի էներգաարդյունավետ արդիականացումը
- ✓ Քաջարանի շրջակա միջավայրի պահպանության 2021թ. Ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառման իրականացումը ավելի կմեծացնի նախագծի արդյունավետությունը
- ✓ Լուսավորության համակարգի արդիականացման համար անհրաժեշտ աշխատանքները՝ լուսամոմիների փոխարինում, սյուների փոխարինում, նոր սյուների փոխարինում, համակարգի կարգաբերում, կիրականացվեն համայնքի միջոցներով:

Շրջակա միջ. պահպանության, գյուղատնտեսության,
տնտ. զարգացման և ծրագրերի բաժնի պետ՝


Գ. Գաբրիելյան

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Էկոլոգիական կրթության զարգացում և տեղեկատվություն» նախագծի

Նախագծի նկարագրությունը

Քաջարան քաղաքի թիվ1 և թիվ2 միջնակարգ դպրոցներում գործող էկոլոգիայի լաբորատորիաները հիմնադրել է Քաջարանի քաղաքապետարանը՝ «Այբ» կրթական հիմնադրամի հետ համատեղ: Դպրոցներում դասավանդվող «Քաջարան. բնությունը և էկոլոգիան» ուսումնական առարկան ընդգրկվել է դպրոցների ուսումնական պլաններում Քաջարանի համայնքապետարանի նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՆ համաձայնությամբ:

Դպրոցների և Քաջարանի համայնքապետարանի միջև կնքված բազմակողմ պայմանագրի համաձայն Քաջարանի համայնքապետարանը իրականացնում է էկոլոգիայի լաբորատորիաների պահպանման և գործունեության ապահովման ծախսերը:

Յուրաքանչյուր տարվա ծրագիրը կազմելուց նախատեսվող ծախսերը հաշվարկվում են ուսումնական պլանով նախատեսված միջոցառումների, աշակերտների սպասվող թվի և որպես շարունակական ծախսեր՝ ՀՀ «Գնումների մասին» օրենքին համապատասխան նախկինում իրականացված համանման և համարժեք գնումների արժեքները:


2021թ ծրագրով նախատեսում ենք կրթական այս պրոցեսի մեջ ընդգրկել նաև համայնքի մյուս՝ գյուղական բնակավայրերի դպրոցները:

Նախատեսված միջոցառումների նկարագրությունն ու ծախսերը

Դպրոցներում Քաջարանի համայնքապետարանի կողմից հիմնադրված էկոլոգիայի լաբորատորիաների գործունեության ապահովում				
Միջոցառման անվանումը	Նկարագրություն, քանակական ցուցանիշներ	Միավորի գին	Գումար հազ. դրամ	Ծանոթություն
Դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների համար ուսումնական դիդակտիկ նյութերի ձեռք բերում	1. Աշխատանքային տետրեր, 50 հատ Չափսը՝ 23,5*16,5 սմ 18 էջ Տպագրությունը՝ լազերային 2. Ուսումնական մոդելներ 3. Տեղեկատու տպագիր նյութեր	155,0 հազ դրամ	310,0	Որպես շարունակական ծախսեր՝ գնման արժեքների որոշման համար հիմք ենք ընդունել ՀՀ «Գնումների մասին» օրենքին համապատասխան նախկին տարիներին իրականացված համանման և համարժեք գնումների արժեքները:
Դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների համակարգչային և էլեկտրոնային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռք բերում	Պլանային սպասարկում՝ յուրաքանչյուր լաբորատորիայի համար (2 լաբորատորիա) տարեկան 2 անգամ	Յուր. սպասարկում ը՛10,0 հազ դրամ	40,0	
Սարքավորումների համար լրակազմի ձեռք բերում	Քարթրիջների ձեռք բերում և լիցքավորում, էլեկտրական մարտկոցների, մեկանգամյա օգտագործման	100,0 հազ.դրամ	200,0	

	ինդիկատորների, թեստային անալիզների համար քիմիական նյութերի ձեռք բերում: 2 լաբորատորիայի համար			
Կրթական ծառայությունների ձեռք բերում	Յուրաքանչյուր լաբորատորիայի համար մեկ աշխատանքային միավոր՝ փորձերի նախապատրաստման, ցուցադրման, աշակերտների հետ գործնական պարապմունքների անցկացման համար	225,0 հազ. դրամ տարեկան՝ մեկ աշխատանքա յին միավորի համար	450,0	
ԸՆԴԱՄԵՆԸ			1000,0	

Շրջակա միջ. պահպանության, գյուղատնտ. և
տնտ. զարգացման և ծրագրերի բաժնի պետ՝



Գ. Գաբրիելյան

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

«Թափոնների կառավարման բարելավում» նախագծի


Նախագծի նկարագրությունը

Համայնքի սանիտարահիգիենիկ իրավիճակի վրա բացասական ազդեցություն է թողնում բնակավայրերի փողոցներում, պուրակներում, խաղահրապարակներում և որոշ հանգստի գոտիներում աղբամանների բացակայությունը կամ սակավությունը: Այս հանգամանքը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում նաև քաղաքի սանիտարական մաքրումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

Նախագծով առաջարկվում է ձեռք բերել մետաղական, փոշեներկված, 25-30լ տարողությամբ, ստացիոնար տեղակայմամբ, գետնին ամրացվող, առանց կափարիչ 30 հատ աղբաման:

Աղբամաններ տեղադրման աշխատանքների հետ կապված ծախսերը կիրականացնի համայնքապետարանը:

Շրջակա միջ. պահպանության, գյուղատնտեսության,
ինտ. զարգացման և ծրագրերի բաժնի պետ՝



Գ. Գաբրիելյան

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Համայնքային կրթական հաստատությունների բուժկետների տեխնիկական պայմանների
ապահովման նախագծի

Նախագծի նկարագրությունը

Նախագծի նպատակը համայնքային կրթական հաստատությունների (Լեռնաձոր գյուղի մանկապարտեզի և Քաջարանի մանկապատանեկան արվեստի դպրոցի) բուժկետների տեխնիկական պայմանները ՀՀ Կառավարության 05.12.2002թ. № 1936-Ն «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, գյուղական բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխանեցնելն է:

Լեռնաձոր գյուղի մանկապարտեզի բուժկետում առկա միջոցները բավարար չեն քանակապես, հնացած են և չեն համապատասխանում արդիական բժշկական, բարոյական, տեխնիկական, էթետիկական պահանջներին, իսկ Քաջարանի մանկապատանեկան արվեստի դպրոցի բուժկետը ընդհանրապես կահավորված չէ (դպրոցը 2019թ. է հիմնանորոգվել, բուժկետի համար գույք ու սարքավորումներ ձեռք չեն բերվել):

Նախագծի արդյունքները

Մանկապարտեզի բուժկետի տեխնիկական ապահովվածությունը կհամապատասխանի սահմանված չափանիշներին:


Նախագծի իրականացումը հնարավորություն կտա ապահովել մանկապարտեզ հաճախող 25 սաների և արվեստի դպրոց հաճախող 250 աշակերտների համար առողջապահական պահանջվող նորմերի պահպանումը:

Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ Կառավարության 05.12.2002թ. № 1936-Ն որոշմամբ նախադպրոցական հաստատությունների բուժկետների համար սահմանված հետևյալ անհրաժեշտ սարքավորումները.

Ռուբի ապարատ
Մանկական փոնոմետր
Բժշկական էլեկտրոնային ջերմաչափ
Հասակաչափ կշեռք
Բժշկական ապակե պահարան
Բժշկական թախտ
Աթոռներ
Սեղան

Շրջակա միջ. պահպանության, առողջապահության,

ծրագրերի բաժնի պետ՝



Գ. Գաբրիելյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Քաջարան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2021թ ծրագրի Հաստատված է Քաջարան համայնքի ավագանու 10.07.2020թ. № 43-Ա որոշմամբ

Քաջարան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2021թ. ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

Հաստատում եմ

Համայնքի ղեկավար

« 15 »

06




ՀԱՎԵԼՎԱԾ

ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԿԱՆԱՑՄԱՆ 2021ԻՉ ԾՐԱԳԻ

Ծրագրի ոլորտը և միջոցառումների անվանումը	Միջոցառումների հիմնական ցուցանիշները						Ֆինանսավորման ծավալները (հազ. ՀՀ դրամ, աճողական)			Այլ տվյալներ
	Կտրվածություն	Չափի միավոր	Միավորի քանակ	Քանակ	Ընդհանուր	Վեց ամիս	Ինը ամիս	Տարի		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ԲՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ										
1	Մթնոլորտային օդի պահպանություն					25750,0	24050,0	25500,0	25750,0	Գնանշան համար հինգ են հանդիսացել բարդային փորձերի պահպանման համար նախատեսված տեխնիկայի արտադրության գնաղվող և ՀՀ-ում պաշտոնական ներկայացուցություններ ունեցող ԵԱՏՄ երկրների կազմակերպությունների գնացուցակները՝ տեղադրված պաշտոնական կայքերում: Մասնավորապես՝ gazavotmir.ru, azgaz.ru, forpost.ru Նկատի ենք ունենել նաև այլ համայնքների կողմից հայտարարված մրցույթների արդյունքները
	Ջրցան մեքենայի ձեռք բերում	2-րդ եռ	հատ	21800,0	1	21800,0	21800,0	21800,0	21800,0	
2	Քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում					1750,0	1750,0	1750,0	1750,0	Գնանշան համար հինգ են հանդիսացել լուսավորային լուսարձակների ներմուծման և վաճառքով գնաղվող կազմակերպությունների առաջարկված գնացուցակները՝ տեղադրված պաշտոնական կայքերում: Մասնավորապես՝ megalight.am, energysaving.am, https://www.360led.am Առաջնորդվել ենք նաև 2018-20թթ. իրականացված ծրագրերի արդյունքներով:
	Արտաքին լուսավորության լուսարձակների ձեռք բերում	2-րդ եռ	հատ	35,0	50	1750,0	1750,0	1750,0	1750,0	
3	Էկոլոգիական կրթություն, գիտելիք և տեղեկատվություն					1000,0	500,0	750,0	1000,0	Նախատեսված ծախսերի հաշվարկը ներկայացված է կից բացատրագրում
	Քաղաքի դպրոցների Էկոլոգիայի լաբորատորիաների գործունեության ապահովում	1-4 եռ.	լաբ.	500,0	2	1000,0	500,0	750,0	1000,0	

4	Կենցաղային թափոնների կառավարման բարելավում	2-րդ եռ			1200,0	0,0	1200,0	1200,0	1200,0	Նախատեսված ծախսերի հաշվարկը ներկայացված է կից բացատրագրում		
		հապ	40,0	30								
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ												
5	Լեռնաձորի մանկապարտեզի և Քաջարանի արվեստի դպրոցի բուժկետերի տեխնիկական պայմանների ապահովում				1290,0	0,0	1290,0	1290,0	1290,0	Գնանձան համար ինքն են հանդիսացել բժշկական գույքի և սարքավորումների ներմուծմանը և վաճառքով զբաղվող կազմակերպությունների առաջարկված գնացուցակները տեղադրված պաշտոնական կայքերում http://medtechservice.am, http://barry.am http://unimed.am Ստացնողովել ենք նաև 2018-20թթ. իրականացված ծրագրերի արդյունքներով:		
		Ջերմայնակի	հապ	55,0							5	275,0
		Հասակայնակի կշեռք	հապ	80,0							1	80,0
		Բժշկական ապակե պահարան	հապ	70,0							2	140,0
		Բժշկական թախար	հապ	75,0							2	150,0
		Աթոռներ	հապ	40,0							6	240,0
		Տոնոմետր	հապ	7,5							2	15,0
		Տեսողության սրտգնան արդասակներ լրասվորող համակարգով	հապ	75,0							2	150,0
		Սեղան	հապ	60,0							4	240,0
		ԸՆԴԱՄԵՆԸ									27040,0	24050,0
Կապիտալ ծախսեր												
Վարչական ծախսեր												
					26040,0	23550,0	26040,0	26040,0	26040,0			
					1000,0	500,0	750,0	1000,0	1000,0			

Շրջ. միջ. պահպանության, գյուղատնտեսության, տնտ. զարգացման և ծրագրերի բաժնի պետ՝

 Գ. Գաբրիելյան